ՀՀ վարչական դատարանին

Հայցվոր՝
Արման Սուլեյմանյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Սվաչյան փողոց, 46շ., 25 բն.
Հեռախոս՝ 077 46 19 78

Ներկայացուցիչ՝
Գեւորգ Հայրապետյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 1-ին թ., 51շ., 56բն.
Հեռախոս՝ 099 11 30 99

Ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Պատասխանող՝
ՀՀ վարչական քաղաքացիական դատարան
Դատավորներ՝ Ամրահի Սուրենի Պետրոսյան
Կարեն Վանուշի Չիլինգարյան
Աստղիկ Ֆրունզեյի Խառատյան

Հայցադիմումը ներկայացվել է պատվիրված նամակով

Հայց

Դատարանի գործողությունը (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին

ՀՀ վարչական դատարանին եմ դիմում՝ իրացնելով Արման Սուլեյմանյանի (այսուհետ՝ նաեւ Վստահորդ)՝ ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ձեւակերպված դատական պաշտպանության իրավունքը:

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը

1.1. Իմ Վստահորդը լրագրող է, 2014թ.-ի մայիսից լուսաբանել է ՀՀ քաղաքացի Դավիթ Հակոբյանի վեցամյա որդու խնամակալությանը վերաբերող թիվ ԼԴ/0514/02/11 դատական գործը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաեւ Դատարան): Դատական գործը քննվել է դռնբաց: Հոկտեմբերի 30-ին նշանակված որոշման հրապարակ ժամանակ Դատարանն առանց որեւէ պատճառաբանության արգելել է իմ Վստահորդին տեսանկարահանել որոշման

եզրափակիչ մասի հրապարակումը: Սույն հայցով վիճարկվում է Դատարանի գործողության իրավաչափությունը:

2. Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը

2.1. Իմ Վստահորդը, լրագրողի իր մասնագիտական պարտականությունները իրականացնելու ընթացքում, 2014թ.-ի մայիսից փորձել է լուսաբանել ՀՀ քաղաքացի Դավիդ Հակոբյանի վեցամյա որդու խնամակալությանը վերաբերող դատական գործը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում:

2.2. ՀՀ քաղաքացի Դավիդ Հակոբյանի վեցամյա որդու խնամակալությանը վերաբերող դատական գործը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում ընթացել է դռնբաց:

2.3. 2014թ.-ի հոկտեմբերի 30-ին նշանակված որոշման հրապարակ ժամանակ Դատարանն արգելել է իմ Վստահորդին տեսանկարահանել որոշման եզրափակիչ մասի հրապարակումը:

2.4. Դատարանը տեսանկարահանման արգելքը չի պատճառաբանել:

2.5. Իմ Վստահորդը Դատարանի աշխատակազմից խնդրել եւ ստացել է որոշման հրապարակման նիստի ձայնագրությունը:

2.6. Ձայնագրության մեջ որպես նիստի մաս առկա չէ որոշման եզրափակիչ մասի հրապարակումը նկարահանելու վերաբերյալ Դատարանի արգելքը:

3. Հայցի իրավական հիմքերը եւ հայցի փաստարկները

3.1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է”:

3.2. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք”:

3.3. “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու

ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից”:

3.4. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը”:

3.5. Սույն հայցով ներկայացված փաստական հանգամանքներից հստակ է, որ իմ Վստահորդը փնտրել է տեղեկատվություն, սակայն այն չի ստացել: Հետեւաբար, ակնհայտորեն տեղի է ունեցել Վստահորդիս՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքի միջամտություն:

3.6. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ “Տեղեկատվության ապահովման հիմնական սկզբունքներն են՝ … 2) տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը…. 4) հրապարակայնու թյունը”: Սույն հայցով իմ Վստահորդը փորձում է պաշտպանել այդ թվում նաեւ իր տեղեկատվության ազատության իրավունքը, որը զուգակցվում է արդար դատաքննության իրավունքի հետ:

3.7. Դատաքննության հրապարակայնությունը հանդիսանում է այն կամրջակը, որով իրականանում է դատարանի եւ հասարակության փոխազդեցությունը: Հասարակությունը պետք է իմանա, ինչպես է իրականացվում վեճերը լուծելու պետական մենաշնորհը, համոզվի, որ դատարանը գործում է արդար ու բարեխիղճ, եւ կիսում է հասարակությունում ձեւավորված արժեքային համակարգը:

3.8. Իր հերթին հրապարակային դատաքննությունը հասարակության վրա դաստիարակչական ազդեցություն է գործում՝ սահմանելով վարքագծի իրավաչափ օրինակներ:

3.9. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք”:

3.10. Դատաքննությունն օրինական է միայն այն ժամանակ, երբ այն իրականացվում է հրապարակայնորեն: Դատավորը, վերջին հաշվով, իրենով ներկայացնում է ժողովրդի՝ մարդկանց կարծիքը, ովքեր իրավունք ունեն տեղյակ լինելու, թե իրենց անունից ինչպես է իրականացվում արդարադատությունը: Արդարադատության հրապարակային իրականացումն արտահայտվում է ոչ միայն նրանում, որ հետաքրքրասեր հանդիսատեսը լցնում է դատական նիստի դահլիճը, որի թողունակությունը վարչական դատարանի դահլիճներից մեծամասությունում՝ հինգ

հոգուց չի անցնում: Այդ սկզբունքի իրացումը իրականանում է պարբերական մամուլում հրապարակումների, մասնագիտական հաշվետվությունների եւ դատական ու իրավակիրառական պրակտիկայի ամփոփումների հրապարակումների ձեւով: Հենց այս կերպ էլ հասարակությունը՝ ժողովուրդը տեղեկանում է արդարադատության համակարգի մասին, միեւնույն ժամանակ իրացնում՝ իր տեղեկացված լինելու իրավունքը: Այս հարթության մեջ է, որ համընկնում են մարդու հիմնարար իրավունքերը, առանց որոնց անհնար է ժողովրդավարական հասարակարգի կառուցումն ու գոյությունը՝ անկախ եւ անկողմնակալ դատարանի ու տեղեկացված լինելու իրավունքները:

3.11. 2.2. Նարինե Գասպարյանն, Արա Ղազարյանը, Նաիրա Ազիզյանն իրենց՝ "Արտահայտվելու ազատության եւ անձնական կյանքը հարգելու իրավունքների վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի մոտեցումները" աշխատությունում հանգել են հետեւյալ եզրակացությանը.՝ "... համաձայն Եվրոպական դատարանի դատավճիռների, հասարակությունը պետք է տեղեկացված լինի արդարադատության իրականացման հետ կապված հարցերին, ինչը հիմնականում պայմանավորված է իրավական պետության ամրապնդման եւ ժողովրդավարական հասարակության զարգացման համար արդարադատության պատշաճ իրականացման դերով եւ նշանակությամբ" (էջ 50):

3.12. Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը Ռյակիբ Բիրյուկովն՝ ընդդեմ Ռուսատանի գործով (գանգատ 14810/02) 17.01.2008թ վճռով ճանաչել է դիմողի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը, քանի որ հանրության ներկայացուցիչների համար մատչելի չեն եղել դատական գործի նյութերը: Սույն գործով գանգատի հիմք էր հանդիսացել էր այն հանգամանքը, որ վճիռը հրապարակելիս ներպետական դատարանները հրաժարվել էին հրապարակել վճռի ամբողջական տեքստը եւ բավարարվել էին զուտ դրա "օպերատիվ" մասի հրապարակումով: Դիմողը պնդում էր, որ ոչ իր եւ ոչ էլ հասարակության համար չկար որեւէ այլ միջոց, որով վճիռն ամբողջությամբ մատչելի լիներ: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը իրավունքի խախտման փաստը ճանաչել է ելնելով հետեւյալ իրավական դիրքորոշումներից.

3.12.1. Նախ, Դատարանը նշել է, որ դատաքննության հրապարակային բնույթը ապահովում է, որպեսզի հասարակությունը կարողանա իրականացնել հասարակական վերահսկողություն արդարադատության իրականացման վրա, որը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունք՝ "30. Դատարանը հիշեցնում է, որ դատաքննության հրապարակային բնույթը կողմերին պաշտպանում է գաղտնիության ռեժիմում եւ առանց հասարակական հսկողության արդարադատություն իրականացնելուց, որը նաեւ հանդիսանում է միջոցներից մեկը՝ որի միջոցով պահպանվում է ստորադաս եւ վերադաս դատարանների նկատմամբ վստահությունը: Երբ արդարադատությունը բաց է տեղի ունենում, ապա հրապարա-կայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին հասնելուն, այսինքն՝ արդար դատաքննությունը, Կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է (տես Պրետտոն եւ այլոք՝ ընդդեմ

Իտալիայի, 08.12.1983թ որոշումը, Ա սերիա № 71, էջ 11, կետ 21, եւ Աքսենն՝ ընդդեմ Գերմանիայի, 08.12.1983թ որոշումը, Ա սերիա № 72, էջ 12, կետ 25)”: (Նույն տեղը, կետ 30):

3.12.2. Այնուհետեւ Դատարանը նշել է, որ դատաքննության հրապարակայնություն ասելով կարող է հասկանալ, inter alia, դատական որոշումը հրապարակելու պահանջ եւ այս պահանջն ամբողջությամբ չկատարելու դեպքում՝ հասարակության համար նման որոշման մատչելիությունն այլ եղանակով ապահովելու պահանջ՝ “36. Որոշումը հրապարակելու պահանջը համարվել է խախտված, երբ երկու իրավասության դատարանների որոշումներն ել, որոնցում փոխհատուցման մասին գործը վարվել էր պրիվատ կերպով, հրապարակավ չէին արձակվել եւ հասարակությանն այլ եղանակով մատչելի չէին եղել (տես Վենտերն՝ ընդդեմ Ավստրիայի, 24.12.1997թ որոշումը, Վճիռների եւ որոշումների հավաքածու 1997-VII, 56-60-րդ կերերը): Եվ վերջապես, մեկ այլ գործում, որտեղ հրապարակային դատաքննություն չանցկացնելը համարվել էր չարդարացված, տվյալ գործի նկատմամբ իրավական հետաքրքրություն ունենալու հանգամանքը հաստատած անձանց համար գործի նյութերի մատչելիությունն ապահովելու մասին իրավական դրույթի առկայությունը եւ հատուկ հետաքրքրություն ներկայացնող որոշումների հրապարակումը, մեծամասամբ վերաքննիչ դատարանների եւ Գերագույն դատարանի, համարվել են քննության ենթակա հրապարակայնության հարցի պահանջին չբավարարող միջոցներ: (տես՝ Մոզերն՝ ընդդեմ Ավստրիայի, 12643/02, 103-րդ կետ, 21.09.2006թ)”: (Նույն տեղը, կետ 36): “34. …Վճռի հրապարակայնորեն հայտարարելու պահանջը համարվում է բավարարված, եթե դատարանի տեղեկատուի մեջ տպագրված վճիռը մատչելի է բոլորին” (նույն տեղը, կետ 34):

3.13. Փաստորեն, Եվրոպական դատարանը նույնացնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի “Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում” արտահայտությունը “դատավճիռը հրապարակայնացնելու” հասկացության հետ: Պրետտոյի գործով վճռում (վկայակոչված վերեւում) Դատարանը համեմատում է 6-րդ հոդվածի վերը նշված արտահայտության անգլերեն եւ ֆրանսերեն տարբերակները եւ գտնում, որ անգլերեն "judgment shall be pronounced publicly" արտահայտությունը տպավորություն է թողնում, որ պահանջվում է միայն վճռի տեքստի բարձրաձայն կարդալը դատարանի դահլիճում (նույն տեղը, պարբ. 25): Նույն տպավորությունն է թողնում նաեւ ‘jugement sera rendu publiquement’ արտահայտությունը ֆրանսերեն տարբերակում, թեեւ ‘rendu’ բառը կարելի է հասկանալ նաեւ “տալ” իմաստով, որը նշանակում է, որ Կոնվենցիայի հիմնադիրները գուցե նպատակ ունեին շեշտել վճիռը հանրությանը տալու իմաստը: Ինչեւէ, համեմատելով սույն տեքստը Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) համապատասխան 14-րդ հոդվածի հետ, Դատարանը նկատեց, որ առաջին կարող է թվալ, որ Դաշնագիրն ավելի լայն իրավունք է տալիս, քանի որ նշված հոդվածում օգտագործված են “judgment shall be made public” (անգլերեն) եւ “sera public” (ֆրանսերեն) արտահայտությունները, որոնք նշանակում են, որ “վճիռը պետք է

հրապարակայնացվի”: Որպեսզի նշված իրավիճակից ելնելով կարողանա տրամադրել ճիշտ եւ վերջնական մեկնաբանություն, Դատարանն ուշադրություն դարձրեց, որ Կոնվենցիայի անդամ պետութ-յուններում բացի դատավճիռը բարձրաձայն կարդալուց, ավանդաբար, օգտագործվել են վճիռները հրապարակայնացնելու այլ միջոցներ, օրինակ՝ վճիռների տեղավորելը հանրության համար մատչելի շտեմարաններում: Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի հիմնադիրները չէին կարող իրենց ուշադրությունից բաց թողել նշված փաստը՝ նույնիսկ եթե նման մտահոգության առկայությունն հստակորեն չի երեւում Կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերից: Դատարանը գտավ, որ չի առաջնորդվելու 6-րդ հոդվածի նշված արտահայտության բառացի մեկնաբանությամբ: Ուստի, Պրետտոյի գործով Դատարանը որոշեց, որ թեեւ Վճռաբեկ դատարանում վճիռն ամբողջությամբ չէր կարդացվել, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռի տեքստն ամբողջությամբ տեղադրվել էր Վճռաբեկ դատարանի տեղեկատուի մեջ եւ մատչելի դարձվել հանրությանը, վճռի հրապարակելու սկզբունքը 6-րդ հոդվածի հիմքով չէր խախտվել (տե՛ս Պրետտոն եւ այլոք՝ ընդդեմ Իտալիայի, 08.12.1983թ որոշումը, Ա սերիա № 71, էջ 11, պարբ. 25, 26, 27 եւ 28),

3.14. Ուստի, վստահաբար կարելի է ասել, որ Դատարանը վճիռը դատաքննության ընթացքում հրապարակելու հասկացությունը նույնացնում է վճիռը հրապարակայնացնելու հասկացության հետ: Նման դիրքորոշումն էր պատճառը, որ Ռյակիբի գործով Դատարանը որոշեց, որ հարցը պետք է քննի երկու տեսանկյունից. արդյոք հրապարակային դատաքննության ընթացքում վճռի մի մասի հրապարակելը կարող է հանգեցնել հրապարակ-ային դատաքննության սկզբունքի խախտում եւ արդյոք հանրության համար սույն վճռի ամբողջական տեքստը որեւէ այլ եղանակով մատչելի է եղել՝ “39. Ուստի, Դատարանի խնդիրը սույն գործում տարբերվում է վերը նշված գործերից: Դատարանը պետք է որոշի, թե արդյոք բաց դատաքննության ընթացքում միայն վճռի օպերատիվ մասի հրապարակելը դիմումատուի քաղաքացիական գործով համապատաս-խանում է 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Դա անելով Դատարանը պետք է քննի, ինչպես հուշում են Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված եւ վերը նշված սկզբունքները, թե արդյոք դիմողի գործով կայացված պատճառաբանված վճիռը մատչելի է եղել հասարակության համար՝ բացի այն կերպ, որ դրա տեքստը կարդացվել է բաց դատաքննության ընթացքում, եւ եթե դա այդպես է, ապա Դատարանը պետք է հաշվի առնի, թե պատճառա-բանված վճռի հրապարակայնության ապահովման հարցում ինչպիսի միջոցներ են կիրառվել՝ վճռի վրա հասարակական վերահսկողության ապահովման նպատակով” (նույն տեղը, կետ 39):

3.15. Կիրառելով վերը նշված սկզբունքները տվյալ գործի փաստերը վրա Դատարանը նկատեց, որ ներպետական օրենսդրության համաձայն վճռի օրինակը թույլատրվում էր տրամադրել միայն գործով կողմերին, իսկ ինչ վերաբերում էր վճռի հրապարակմանը դատական տեղեկատուի մեջ, ապա օրենսդրական նորմերը արգելում էին, որպեսզի հասարակության համար մատչելի լիներ: Դա նշանակում էր, որ հասարակության համար մատչելի չէր տվյալ վճռի պատճառաբանական մասը եւ, հատկապես, այն նորմերը, որոնց հիման վրա կայացվել էր դատարանի որոշումը (նույն տեղը, պարբ. 43): Օրինակ, Դատարանը ուշադրություն դարձրեց մի կարեւոր

իրավական նորմի վրա, որից բխում էին տվյալ գործով կիրառված մի շարք սկզբունքներ: Վճռի օպերատիվ մասում, որը հրապարակվել էր, ոչ մի նշում չկար նշված սկզբունքների մասում եւ, ուստի, չէր կարելի համարել, որ ՝վճիռը տեղեկատվական առումով նշանակություն ուներ հասարակության անդամների համար, ովքեր չունեին համապատասխան իրավական գիտելիքներ՝ (նույն տեղը, պարբ. 44): Ուստի, Դատարանը որոշեց՝ “45. …Այս իմաստով 6-րդ հոդվածի 1-ին մասով հետապնդվող նպատակը, մասնավորապես՝ դատական իշխանության վրա հասարակական վերահսկողության ապահովումը արդար դատա-քննության իրավունքը երաշխավորելու նպատակով, սույն գործով չէր ապահովվել, քանի որ այն պատճառաբանությունները, որոնք հնարավորություն կտային հասկանալ, թե ինչու էին մերժվել դիմողի պնդումները, մատչելի չէին եղել հասարակության համար” (Նույն տեղը, պարբ. 45): Դատարանը գտնում է, որ տեղի էր ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն պատճառով, քանի որ Պետությունը չէր կատարել վճիռների հրապարակայնության պահանջները (Նույն տեղը, պարբ. 46):

3.16. Սույն հայցի 3.7-3.15 կետերում նշված դիրքորոշումները ցույց են տալիս, թե որքան կարեւոր դատական գործի հրապարակայնության ապահովումը, ներառյալ՝ վճռի պատճառաբանական մասի հրապարակումը եւ հասանելիությունը հասարակության համար: Հետեւաբար, լրագրողի՝ որպես հասարակության ներկայացուցչի եւ հրապարակայնության ապահովողի իրավունքը սահմանափակելը պետք է խիստ պատճառաբանված եւ արդարացված լինի, այլապես հասարակության վերահսկողական եւ արդար դատաքննության իրավունքները կստորադասվեն պաշտոնյաների կամայականություններին: Ուստի, այդ դիրքորոշումները կիրառելի են սույն հայցով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի եւ դատավորների գործողության (անգործության) հարցը լուծելիս:

3.17. Գտնում ենք, որ Դատարանի գործողությունը (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու դեպքում արդարացի իրավունք ունենք պահանջելու, որ վերացվի այն հետեւանքը, որն առաջացել է ոչ իրավաչափ գործողության (անգործության) հետեւանքով, այն է՝ իմ Վստահորդին տրամադրել թիվ ԼԴ/0514/02/11 գործով Դատարանի որոշման եզրափակիչ մասը՝ տեսաձայնագրված տարբերակով:

3.18. Սույն հայցը ենթակա է վարչական դատարանում քննության հետեւյալ պատճառաբանությամբ: Դատարանը դատական իշխանություն իրականացնող բացառիկ կառույց է, եւ չի կարելի նրա իրավազորությունները նույնացնել գործադիր իշխանության մարմինների իրավազորությունների հետ: Սակայն այն դեպքերում, երբ դատարանն իրականացնում է “վարչարարություն”, այլ ոչ թե արդարադատություն, երբ դատավորը հանդես է գալիս որպես իրավունքի իրացումն արգելող ի պաշտոնե, այլ ոչ թե արդարադատության իրականացման ընթացքում, ապա նրանք հանդես են գալիս որպես պետական մարմիններ: Այսպես, դատարանի աշխատակազմը վարչարարություն իրականացնելու իրավազորությամբ օժտված մարմին է, իսկ նրա գործողությունները ենթակա են բողոքարկման վարչական կարգով՝ վերադասությամբ՝ դատարանի նախագահին, իսկ բողոքի մերժման դեպքում՝ նաեւ դատարան: Այսպես, 2008թ.-ի նոյեմբերի 11-ի թիվ 01ԲՎ որոշմամբ ՀՀ վարչական դատարանի նախագահը քաղաքացու դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ դատարանի աշխատակազմի կողմից քաղաքացու՝

տեղեկություն ստանալու դիմումի (վարչական գործի նյութեր ստանալու պահանջի) մերժման առիթով, իսկ 2008թ.-ի նոյեմբերի 12-ի թիվ 02ԲՎ որոշմամբ բավարարել է քաղաքացու դիմումը: Սույն հայցում Դատարանի եւ դատավորների գործողությունների իրավաչափության հարցը բարձրացնում ենք դատական նիստից դուրս նրանց գործողությունների (անգործության) վերաբերյալ: Դատարանները չեն ընդունել միջնորդություն իմ Վստահորդից տեսանկարահանում իրականացնելու վերաբերյալ, չեն հարցրել կողմերի կարծիքները, չեն մերժել միջնորդությունը որպես արդարադատության իրականացման մաս՝ պատճառաբանված: Դատարանը եւ դատավորները արգելել են իմ Վստահորդին ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը տեսանկահարահանման միջոցով որպես վարչարարական իրավազորությամբ օժտված պետական ինստիտուտ եւ որպես պաշտոնյաներ, հետեւաբար նրանց գործողությունները պետք է ենթակա լինեն բողոքարկման վարչական դատավարության կարգով: Այն մասին, որ Դատարանն իմ Վստահորդին արգելել է տեսանկարահանումը արդարադատության իրականացման գործառույթից դուրս, վկայում է նաեւ այն, որ վճռի հրապարակման ձայնագրություններում, որոնք խնդրվել են դատարանից, բացակայում է տվյալ հատվածը, այսինքն, դատարանները գործել են անձնական պաշտոնական հեղինակության հիման վրա, որպես պաշտոնյաներ, այլ ոչ թե նիստի ընթացքում որպես արդարադատություն իրականացնողներ:

3.19. Սույն հայցով խնդրում ենք ոչ իրավաչափ ճանաչել Դատարանի գործողությունը (անգործությունը), քանի որ իմ Վստահորդը լրագրող է, լուսաբանում է դատական գործեր, եւ գտնում ենք, որ առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ գործողություն կրկին կատարելու վտանգ: Մյուս կողմից, իմ Վստահորդը բարենպաստ դատական ակտի դեպքում պատրաստվում է պահանջել ոչ իրավաչափ գործողության (անգործության) դատական գործի ընթացքում դրա հետեւանքով իր կրած գույքային վնասի հատուցում:

3.20. Սույն հայցով ներկայացված չէ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (անդորրագիր) հետեւյալ պատճառաբանությամբ. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն “Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու եւ դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են “Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով”: Միաժամանակ, առաջնորդվելով “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքի 21-րդ եւ 22-րդ հոդվածների դրույթներով եւ հաշվի առնելով, որ իմ Վստահորդը ֆիզիկական անձ է, այլ ոչ թե առեւտրային կազմակերպություն՝ սույն հայցին կից ներկայացվում է միջնորդություն պետական տուրքի վճարումը տարաժամկետելու եւ պետական տուրքի վճարման հարցը վճռով լուծելու մասին:

3.21. Սույն հայցադիմումը ստորագրել է հայցվոր Արման Սուլեյմանյանը, սակայն հայցադիմումին կցվում է նաեւ հայցվորի կողմից Գեւորգ Հայրապետյանին տրված լիազորագիր, նախապես, քանի որ հայցվոր Արման Սուլեյմանյանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով իրեն ընձեռված հնարավորությունից օգտվելով, ներկայանալու է դատական նիստին եւ դատարանին

անձամբ հավաստի Գեւորգ Հայրապետյանին որպես իր ներկայացուցչ սույն հայցով իրեն դատարանում ներկայացնելու համար լիազորելու հանգամանքը:

3.22. Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով, 12-րդ գլխի պահանջներով՝

4. Հայցի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի, 12-րդ գլխի դրույթներով՝

Խնդրում եմ

4.1. Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (Դատավորներ՝ Ամրահի Պետրոսյան, Կարեն Չիլինգարյան, Աստղիկ Խառատյան) այն գործողությունը (անգործությունը), որով արգելվել է Արման Սուլեյմանյանին տեսանկարահանել թիվ ԼԴ/0514/02/11 գործով Դատարանի որոշման եզրափակիչ մասի հրապարակումը:
4.2. Որպես հետեւանք՝ պարտավորեցնել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանին (Դատավորներ՝ Ամրահի Պետրոսյան, Կարեն Չիլինգարյան, Աստղիկ Խառատյան) Արման Սուլեյմանյանին տրամադրել թիվ ԼԴ/0514/02/11 գործով Դատարանի որոշման եզրափակիչ մասը՝ տեսաձայնագրված տարբերակով:

5. Հայցին կցվող փաստաթղթերը

5.1. Միջնորդություն՝ պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու վերաբերյալ,
5.2. Սույն հայցը պատասխանողին ուղարկելը հավաստող փաստաթուղթ (փոստային անդորրագիր),
5.3. Հայցվոր Արման Սուլեյմանյանի կողմից իր Գեւորգ Հայրապետյանին տրված լիազորագիրը,
5.4. Ուղեկցական գրություն:

Հայցվոր Արման Սուլեյմանյան

30.12.2014թ., ք. Երեւան